# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ `<< ՀՀ Արարատի մարզի Լանջառի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի կերպարվեստի 2 ժ. , տեխնոլոգիայի 3 ժ. , մաթեմատիկայի 15 ժ. , քիմիա 4 ժ, կենսաբանություն 4 ժ. , բնագիտություն 2ժ., ինֆորմատիկա 3ժ., և անգլերեն 8 ժ., Ֆիզիկա 5 ժ , ռ. լեզու 14 ժ. ուսուցիչների թափուր տեղերի համար:
Թափուր տեղի համար նախատեսված վարձատրությունը՝ ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերի համապատասխան) և հարցազրույց ( մանկավարժական մասնագիտական գործնական հմտություն): Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործնեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն ( Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները ( դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար `3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
   Փաստաթղթերի պատճենները պետք է ներկաըացնել բնօրինակների հետ:
   Փաստաթղթերն ընդունվում են 31 .08.2022 թ - ից մինչև 13 .09.2022թ - ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի օրերից:
   Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ՝ ըստ կարգի:
   Մրցույթը տեղի կունենա 19.09.2022թ՝ ժամը 15:00-ին, Լանջառի հիմնական դպրոցում, հասցե՝ գ. Լանջառ Կենտրոնական 7 –ում: Հեռ. 093-62-19-42